

էր Կօնտի սրտում, ազգում էր նրա մտքերի վերայ և նոյն իսկ չափազանցութիւնների հասցնում

ԿՕՆՏԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ,

Մեծ հասարակագէտի բնորոշ յատկութիւններից մէկը այն էր, որ նա ոչ միայն սկզբունքներ էր մշակում, մտքեր էր արծարծում, ծրագիրներ էր կազմում, այլև անմիջապէս մասնակցելով ընթացիկ կեանքին, ամենայն ջանք գործ էր դնում իւր սկզբունքները իրականացնելու համար։ Ուրեմն նա ոչ սոսկ գիտնական էր, այլև նոյնչափ եռանդուն հասարակական գործիչ։ Նրա հասարակական գործունէութեան մէջ նկատուում է երկու ձգտում, որ միմեանց շարունակութիւնն են կազմում։ Նա նախ ձգտում էր իւր իսկ ձեռքով *տարածել* իւր սկզբունքները ժողովրդի մէջ, ապա աշխատում էր իւր սկզբունքներն արգէն դաւանողների օգնութեամբ կեանքի մէջ գործադրել նրանց, հասարակական մարմինը ձևակերպել իւր սկզբունքների համեմատ։

1831 թուին Կօնտը սկսեց աստղաբաշխական մատչելի դասախօսութիւններ կարդալ ձրիաբար, որ շարունակեց մինչև 1848 թիւը։ Նա կարգում էր կիրակի օրերը և այդպիսով բանուորներն էլ միջոց էին ունենում նրան լսելու։ Կօնտը կապում էր աստղաբաշխութիւնը միևս զբաղման գիտութիւնների հետ, արծարծում էր իւր կենսական գաղափարները և հէնց այդ էր իսկապէս ունկնդիրներին գրաւողը։ Ինքը Կօնտն՝ էլ ի հարկէ այդ իմանում էր։ Զուտ գիտական տեսութիւններից նա անցնում էր ժամանակակից հասարակական հարցերին։ Մանաւանդ ուշագրութիւն էր դարձնում կապիտալիզմի վրայ, խօսում էր այն մասին, թէ կառավարութիւնը պիտի հսկէ բանուորների և նրանց տէրերի յարաբերութեան վրայ։ Երկու անգամ դասախօսը շօշափեց այնպիսի խնդիրներ, որ կառավարութեան առիթ տուեց մի-

ջամտելու։ Մի անգամ էլ ծաղրական նկատողութիւններ տրաւ այն կեղծաւորութեան մասին, որ յաճախ կրօնական զգացման տեղ է ընդունւում։ Հոգեւոր ամսագիրները ազմուկ բարձրացրին։ Թողովրդական լուսաւորութեան նախարարը տեսուչ ուղարկեց դասախօսութեան ներկայ լինելու։ Բաղդաւորապէս այդ մարդը յայտնի գիտնական Սէնտ-Իլէրն էր, որը յօգուտ Կօնտի զեկուցում տուեց։ Այնուամենայնիւ մի ալլ անգամ նրան նկատողութիւն արին, որ իւր առարկայի սահմաններից չգուրս գալ, սպառնացին, որ եթէ նա կը շարունակէ աստղաբաշխութեան՝ դասերը դրական փիլիսոփայութեան հետ շփոթել, ապա բոլորովին կը դադարեցնեն նրա դասախօսութիւնները։

1849 թուին Կօնտը հիմնեց հասարակական ձրի դասախօսութիւններ մարդկութեան ընդհանուր պատմութիւնից։ Դասախօսութիւնները երկու մասի էին բաժանւում։ Առաջին մասում նա արծարծում էր մարդկութեան հասարակական զարգացման տեսութիւնները։ Երկրորդ մասում նա ի նկատի էր առնում ապագան, նկարագրում էր կատարելագործուած կեանքի պատկերը, նոյնպէս՝ այն անցողական շրջանը, որ անհրաժեշտ էր իդէալին հասնելու համար։ Դասախօսութիւնները մեծ ազդեցութիւն էին անում ունկնդիրների վրայ, որոնցից մէկը ահա թէ ինչ է ասում. «Քառասուն տարի է անցել այդ դասախօսութիւններից, բայց նրանք դեռ խորը կերպով շարժում են մեր սիրտը... Այո, այդ բացառիկ ժամերում մենք զգում էինք մարդկութեան շնչառութիւնը, մենք զմալլում էինք նրա ապագայ կեանքով և մեծութեամբ, մենք համոզւում էինք և մեր սրտերում առ միշտ վառւում էր սրբազան կրակը»։

Սակայն սահմանափակ խումբերի համար դասախօսելով Կօնտը չէր բաւականանում, ալլ աւելի լայնատարած միջոցներ էր որոնում։

Քառասնական թւականներին, երբ Փարիզի փողոցներում հրացանաձգութիւնը չէր դադարում, երբ Ժողովուրդը ամեն ինչ վերականգնել էր ուզում, Կօնտը կազմում է մի շրջաբե-

րական, ուղղուած ամբողջ արեւմտեան Եւրոպային, որով առաջարկում է ազատ ընկերութիւն Հիմնել՝ ժողովրդի մէջ դրական կրթութիւն տարածելու համար: Ընկերութիւնը պիտի նպատակ ունենար, ձրի դասախօսութիւններ միջոցով ծանօթացնել ժողովրդին մի կողմից մատեմատիկական, ֆիզիկական, քիմիական և մարդաբանական գիտութիւնների հետ, իսկ միւս կողմից պատմութեան հետ, որ ճշմարիտ հասարակական գիտութեան նախադուռն է կազմում: Մանրամասնութիւնները դասախօսների հայեցողութեան թողնելով, շրջաբերականը որոշում էր դասախօսութիւնների ընդհանուր բնաւորութիւնը.—նրանք պիտի թափանձուած լինին հասարակական զգացմամբ և խելքը պիտի համարուէր սրտի առաջին նախարարը, որովհետեւ իսկապէս միայն մէկ գիտութիւն կայ, որ է՝ մարդկութեան գիտութիւնը, որին հպատակ են բոլոր միւսները: Ընկերութեան գործունէութիւնը չպիտի սահմանափակուի Փարիզի, նոյն իսկ Ֆրանսիայի մէջ, այլ նա պիտի տարածուի հինգ առաջնորդող ազգերի մէջ, չորոնք դեռ Կարոլոս Մեծի օրերից կազմում են արեւմտեան մեծ հանրապետութիւնը, որի մէջ, չնայելով ազգային կռիւներին և կրօնական վիճաբանութիւններին, տեղի է ունենում այնպիսի մտաւոր և հասարակական զարգացում, որի նմանը չկայ մնացեալ Եւրոպայում: Յիշեալ ազգերն՝ բացի Ֆրանսիացիներից, էին գերմանացիք, անգլիացիք, իտալացիք և իսպանացիք: Դրական ընկերութիւնը, ունենալով միջազգային բնաւորութիւն, պիտի միշտ անկախ համարէ իրան յիշեալ երկիրների կառավարութիւններից:

Վերջապէս 1848 թուի մարտ ամսին Կոնտը հրատարակում է նոր շրջաբերական, որով առաջարկում է կազմակերպել դրական միութիւն: «Ես հիմնեցի—ասում է նա—մի քաղաքական ընկերութիւն, որը կազմակերպող ուղղութիւն ունէր մեծ լեղափոխութեան երկրորդ շրջանում, մինչդեռ Յակոբեանների ընկերութիւնը քննադատող ուղղութեան էր հետևում լեղափոխութեան առաջին շրջանում, սակայն երկուսն էլ միևնոյն նպատակներն ունին աչքի առաջ: Իսկ դրական

միութիւնը պիտի հեռու կանգնէ հասարակական գործերի մէջ անմիջապէս խառնուելուց, այլ նա պիտի քննէ ընթացիկ կեանքի քաղաքական հարցերը, այսինքն ունենայ միայն խորհրդակցական բնուորութիւն: Քննելով կատարուող փաստերը դրական գիտութեան տեսակէտից, նա կը նպաստէ մարդկութեան վերջնական կազմակերպութեան: Ընկերութիւնը պիտի հասարակաց կարծիք ստեղծէ, նպաստէ աշխարհահայեցողութեան և բարքերի մշակուելուն, ուղղութիւն տայ հասարակաց գործերին, բայց անմիջապէս չպետք է խառնուի նրանց մէջ:

Կօնտի սեփական բնակարանում գրուեց ընկերութեան հիմքը մի խումբ մարդկանց մասնակցութեամբ: Յայտնի Լիտւէն բաւականութիւն զգալով մտաբերում է այդ ժողովները: Վերջը պատահող դէպքերը—ասում է նա—արձագանք էին գտնում այդ ժողովներում և շատ անգամ առիթ էին տալիս Կօնտին փայլուն նկատողութիւններ և համարձակ եզրակացութիւններ անելու:

Այդ ընկերութիւնը մեծ ազդեցութիւն չունեցաւ Ֆրանսիական լեղափոխութեան ընթացքի և առհասարակ ժամանակակից դէպքերի վրայ: Այնուամենայնիւ ընկերութեան մասնակցողները օրէցօր բազմանում էին: Առանձին կենդրոններ կազմուեցին մինչև իսկ ուրիշ երկիրներում, օրինակ Հոլլանդիայում, Ամերիկայում և այլն:

Յաւային այն է, որ Կօնտի ընկերութիւնը հետզհետէ մի տեսակ պրօնական բնաւորութիւն էր ստանում, իսկ Կօնտի կրօնի կենդրոնը ամարդկութիւնն էր կազմում, ինչպէս քրիստոնէական կրօնի կենտրոնն Աստուածութիւնն է: Ժողովներում զանազան ծիսակատարութիւններ էին տեղի ունենում և քննում էին հարցեր, որ վերաբերում էին ամարդկութեան պաշտելու գործին: Ինքը Կօնտը սկսում է գիտակցաբար և բացարձակօրէն ներկայանալ որպէս դրականութեան քահանայապետ և ամբողջ մարդկութեան հոգեկան առաջնորդ: Նա ոչ միայն գրքեր էր շարագրում, այլ՛ քարոզներ էր խօսում և երևակայում էր այն օրերը, երբ ինքը պիտի

քարոզէ Փարիզի առաջնակարգ եկեղեցիներից մէկում: Նա մինչև անգամ հրատարակեց «Ռրական հրահանգ», ինչպէս քրիստոնէական կրօնը ունի իւր հաւատապատումը: Նոյն նպատակները ունենալով, Կօնտը 1854 թւին կազմեց գրքերի ցուցակ «Ռրական գրադարան» վերնագրով: Ցուցակը բաղկացած է 150 հատոր գրքերից և բաժանուած է չորս մասի, 1) Բանաստեղծութիւն, 2) Գիտութիւն, 3) Պատմութիւն, 4) Փիլիսոփայութիւն և կրօն:

Վերջապէս իւր սկզբունքները իրականացնելու համար Կօնտը հարկաւոր ժամանակ աշխատում էր իւր կողմը գրաւել բարձրաստիճան անձնաւորութիւններ, կամ զօրեղ հիմնարկութիւններ:

Երբ 1848 թւի լեղափոխութիւնը չարագարացրեց ժողովրդի յոյսերը, Կօնտը դարձնում է իւր ուշագրութիւնը պահպանողական բանակի վրայ և փորձում է իւր կողմը գրաւել պառոււաւոր պահպանողականներին: Նա մի նամակ է գրում սենատոր Վիէլեարդին, որ Նապօլէօնի նախկին դատտիարակն էր: «Ռրականութիւնը» — ասում է նա իւր նամակում — պիտի միացնէ արժանաւոր պահպանողականներին պատուաւոր լեղափոխականների հետ: Սակայն Նապօլէօնը չարագարացրեց Կօնտի յոյսերը և գրականութիւն տարածելու փոխարէն սկսեց ձգտել կայսերական թագ ձեռք բերելուն: Եւ ահա Կօնտը սկսում է յորդորել նոյն սենատորին, որ նա լանդու գրական հալեացքների ընդգիծութիւն ցոյց տալ Նապօլէօնի միտումներին և հարկաւոր դէպքում դատաստանի ենթարկէ նրան:

Նապօլէօնից յոյսը կտրելով, Կօնտը նամակով դիմում է Կայսր Նիկօլայ I: Բաւական մանրամասնութեամբ բացատրելով իւր տեսութեան էութիւնը, Կօնտը խորհուրդ է տալիս հետեւել գրական փիլիսոփայութեան սկզբունքներին և ի միջի այլոց մի շարք անհեթեթ մտքեր է յայտնում ռուսական հարցերի վերաբերութեամբ: Բայց Կօնտի այդ դիմումը անհետեւանք է մնում:

1858 թւին նա նամակ է գրում Ռէշիգ-փաշային, որի մէջ արծարժում է այն միտքը, թէ ինչպէս կարող է իսլամը

անմիջապէս դրականութեան փոխուել: Բայց տրւելքը այս-
անգամ էլ չարդարացրեց դրականութեան քահանայապետի-
յոյսերը:

Վերջապէս Կօնտը կրկին իւր յոյսերը դնում է արև-
մուտքի վրայ և փորձում է համերաշխութիւն ունենալ լի-
սուսեանների հետ: Բայց այստեղ դարձեալ իւր ցանկացած-
յաջողութիւնը չէ գտնում:

Մենք տեսնում ենք ուրեմն, որ Կօնտը ոչ մի ջանք և
միջոց չէ խնայում իւր ծրագիրները իրականացնելու համար,
սակայն նրա ջանքերը մեծ մասամբ ապարդիւն են մնում,
որովհետև մի կողմից ինքը ընկած էր չափազանցութիւննե-
րի մէջ, միւս կողմից նրա տեսութեան ուղիղ կէտերը ոչ թէ
միանգամից, այլ փոքր առ փոքր, երկար ժամանակի ընթաց-
քում կարող են իրագործուել *):

Ս. Թառայեանց.

(Կը շարունակուի)



*) Աղբիւրները կը լինենք վերջում: